«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«01» 10 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Թունյան

N ՍՑ-ԳԲԽ-01/13 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2013թ. N 1.1/13.1/937-13 գրությամբ ներկայացված «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03308717) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.01.2013թ. N 1.1/13.1/937-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝

խնդրելով ուսումնասիրել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.12.2012թ. N ՀՍ/1-585 գրության պատճենը:

2. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով, 31.07.2013թ. N 09/032-1053 գրությամբ դիմել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 26.08.2013թ. N ՍՄ-13/19 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 20.01.2012թ. կնքվել է «ՔՆՔ ԾԻԳ-ԾՁԲ-12/37» ծածկագրով հեղինակային հսկողության ծառայության մատուցման պետական պայմանագիր (այսուհետ Պայմանագիր):

Ընկերության կողմից իրականացվել է հեղինակային հսկողություն 2012թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում: 2012թ. օգոստոս ամսին ներկայացվել է համապատասխան կատարողական ակտ, որը Պատվիրատուի կողմից հետ է վերադարձվել վճարման ենթակա գումարը ճշտելու պատրվակով:

Այնուհետև, ներկայացվել է ևս մեկ կատարողական ակտ 2012թ. դեկտեմբերի 12-ին, որը ևս չի վճարվել:

Ընկերությունը դժգոհություն է հայտնել, որ Վայոց Ձորի մարզի Քարագլուխ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության իրականացման պայմանագիրը (240.982 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով) 28.12.2012թ. միակողմանիորեն լուծվել է: Մինչ այդ Պատվիրատուի կողմից որևէ դիտողություն Ընկերությանը, կապված աշխատանքների կազմակերպման որակի հետ, չի եղել:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն նշել է նաև, որ ամբողջ տարվա ընթացքում իրականացրել է հեղինակային հսկողություն, շինարարական աշխատանքները կատարվել են Ընկերության կողմից արված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան, անհրաժեշտության դեպքում կատարվել են ծավալների ճշտում և համադրում:

2012թ.-ին ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև կնքվել են հեղինակային հսկողության ևս 7 պայմանագրեր, որոնց առնչությամբ որևէ դիտողություն Պատվիրատուի կողմից Ընկերությանը չի արվել: Ըստ Ընկերության՝ իրենց կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելն անհիմն է:

Կենտրոնում 2013թ. օգոստոսի 30-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ժամանակ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրենը հայտնեց, որ Ընկերությանը հայտնի չէ, թե ինչու է պայմանագիրը միակողմանի լուծվել:

Հանձնաժողովի այն հարցին, թե արդյոք առկա է արձանագրված փաստ, որ նախագծից շեղում է տեղի ունեցել, Ընկերության տնօրենը պատասխանեց, որ նման դեպք չի եղել, ավելին՝ գտնում է, որ տվյալ ծառայությունը մատուցվել է որակով: Կատարողական ակտ է ներկայացվել օգոստոս և դեկտեմբեր ամիսներին, այնուհետև 28.12.2012թ. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից ծանուցվել են, որ պայմանագիրը միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն: Այն հարցին, թե Ընկերությունն ինչ գործունեություն է ձեռնարկել Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու հետևանքով, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրենը պատասխանեց, որ չնայած նրան, որ ոչ մի քայլ չի ձեռնարկվել իրենց կողմից, սակայն վերջիններս համաձայն չեն, որ Պայմանագիրը միակողմանի լուծվել է ոչ պատշաճ ծառայության մատուցման հիմքով:

2. <u>ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 31.07.2013թ. N 04/032-1052 գրությամբ դիմել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ին:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն 07.08.2013թ. N ՀՍ/1-819-13 գրությամբ հայտնել է, որ Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացման ենթակա անհրաժեշտ տեղեկությունները Պատվիրատուի կողմից նախկինում, մասնավորապես՝ 05.09.2012թ. ՀՍ/1-130, 28.12.2012թ. ՀՍ/1-585 և 06.05.2013թ. ՀՍ/1-409-13 գրություններով արդեն իսկ ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Կենտրոնը 03.09.2013թ. N 04/032-1234 գրությամբ դիմել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ին՝ խնդրելով ներկայացնել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից 20.01.2012թ. կնքված «ՔՆՔ ԾԻԳ-ԾՁԲ-12/37» ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումները հիմնավորող փաստաթղթերը և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, ինչպես նաև տեղեկատվություն՝ Պայմանագրի շրջանակներում Ընկերության նկատմամբ հաշվարկված տույժերի, տուգանքների և դրանց վճարումների մասին:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն 17.09.2013թ. N ՀՍ/997-13 գրությամբ հայտնել է, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի հետ կնքված Վայոց Ձորի մարզի գյուղ Քարագլխի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման «ՔՆՔ ԾԻԳ-ԾՁԲ-12/37» ծածկագրով պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է 28.12.2012թ. թիվ ՀՍ/1-586 գրությամբ՝ հիմք ընդունելով Ընկերության կողմից մատուցված ծառայությունը Պայմանագրի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հանգամանքը, մասնավորապես՝ Պատվիրատուի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում վերահսկվող շինարարական աշխատանքներում հայտնաբերվել են թերություններ, որոնց վերաբերյալ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն իր կողմից իրականացվող հսկողության ընթացքում չի հայտնաբերել, չի ծանուցել Պատվիրատուին և համապատասխան գրառում չի իրականացվել շինարարության վարման մատյանում: Միևնույն ժամանակ, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն հայտնել է, որ Ընկերության նկատմամբ

տույժեր և տուգանքներ չեն հաշվարկվել, իսկ ոչ պատշաճ մատուցված ծառայության մասով վճարում չի կատարվել:

Կենտրոնը պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի ընթացքը լուծելու համար 29.01.2015թ. թիվ 04/032-116 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով հնարավոր սեղմ ժամկետում տրամադրել, որպես Պայմանագրի կատարման ապահովում, Ընկերության կողմից կնքված տուժանքի մասին համաձայնության, Պայմանագրին կից տեխնիկական բնութագրի, ՀՀ Վայոց Ձորի մարզի Քարագլխի գյուղի ավագ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում հայտնաբերված և արձանագրված թերությունների ակտի պատճենները, ինչպես նաև տրամադրել տեղեկություն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի և տուժանքի գումարներն Ընկերության կողմից վերականգնելու վերաբերյալ՝ առանձին նշելով այդ գումարների չափը:

Ի պատասխան Կենտրոնի 29.01.2015թ. թիվ 04/032-116 գրության՝ Պատվիրատուն 13.02.2015թ. թիվ ՀՍ/1-127-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության նկատմամբ հաշվարկվել է տուգանք, որն էլ ամբողջությամբ վճարվել է վերջինիս կողմից՝ կից ներկայացնելով վճարման փաստաթղթերը:

Կենտրոնը 23.02.2015թ. N 04/032-293 գրությամբ կրկին անգամ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել Կենտրոնի 29.01.2015թ. թիվ 04/032-116 գրությամբ պահանջված՝ որպես Պայմանագրի կատարման ապահովում, Ընկերության կողմից կնքված տուժանքի մասին համաձայնության, Պայմանագրին կից տեխնիկական բնութագրի, ՀՀ Վայոց Ձորի մարզի Քարագլխի գյուղի ավագ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում հայտնաբերված և արձանագրված թերություն-ների ակտի պատճենները:

Պատվիրատուն 03.03.2015թ. թիվ ՀՍ/1-197-15 գրությամբ Կենտրոնին ներկայացրել է 29.01.2015թ. թիվ 04/032-116 գրությամբ պահանջվող փաստաթղթերը:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-01/13 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը Կենտրոնում 2013թ. օգոստոսի 30-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստին:

4. ՍՑ-ԳԲԽ-01/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2013թ. N 1.1/13.1/937-13 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի և «Տիրանուն» ՓԲԸ-ի միջև կնքված ՀՀ Վայոց Ձորի մարզի Քարագլուխ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել են մի շարք աշխատանքներ, որոնց նկատմամբ պետք է հեղինակային հսկողություն իրականացներ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն:

2. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 20.01.2012թ. կնքվել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Քարագլուխ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության իրականացման «ՔՆՔ ԾԻԳ-ԾՁԲ-12/37» ծածկագրով պետական պայմանագիր:

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել են Ընկերության՝ որպես հեղինակային հսկողություն իրականացնողի պարտակա-նությունները:

4. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով սահմանվել է, որ գնման ենթակա ծառայությունը նախատեսվում է մատուցել 2012թ.-ի ընթացքում:

5. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 16.08.2012թ. N-ՍՄ-12/19 գրությամբ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ին ներկայացրել է հեղինակային հսկողության ծառայության կատարողական ակտերը ՀՀ Վայոց Ձորի մարզի Քարագլուխ համայնքի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար՝ խնդրելով տալ վճարման:

6. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն 06.11.2012թ. N ՀՍ/365 գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է, որ վճարման ներկայացված ՀՀ Վայոց Ձորի մարզի գ.

Քարագլխի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության կատարողական ակտերը հետ են վերադարձվում՝ գումարի ճշտման պատճառով:

7. Պատվիրատուն 11.12.2012թ. թիվ ՀՍ/492 գրությամբ դիմել է կապալառու «Տիրանուն» ՓԲԸ-ին և հայտնել, որ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի ներկայացուցիչների այցելությամբ ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Քարագլխի դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում արձանագրվել են թվով 15 թերություններ (սան. հանգույցների պատերի և առաստաղի գաջե սվաղի քանդում, փոխարենը ցեմենտ-ավազե սվաղի իրականացում, տանիքի թերությունների վերացում, պատերի և առաստաղների տարանջատված սվաղի քանդում և վերականգնում և այլն), որոնք ենթակա են վերացման հնգօրյա ժամկետում՝ կից ներկայացնելով վերը նշված թերությունների վերացման ակտը:

8. «Տիրանուն» ՓԲԸ-ն 19.12.2012թ. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Քարագլխի դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում Պատվիրատուի կողմից արձանագրված թերությունները կվերացվեն սեղմ ժամկետներում:

9. Ընկերությունը 12.12.2012թ. N-ՍՄ-12/39 գրությամբ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ին ներկայացրել է ՀՀ Վայոց Ձորի մարզի Քարագլխի դպրոցի հեղինակային հսկողության կատարողական ակտը՝ խնդրելով տալ վճարման:

10. Պատվիրատուն 28.12.2012թ. N ՀՍ/1-586 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզի Քարագլխի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողությունը ոչ պատշաճ որակով կատարելու հիմքով՝ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 20.01.2012թ. կնքված «ՔՆՔ ԾԻԳ-ԾՁԲ-12/37» ծածկագրով պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված՝ համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի:

11. Պատվիրատուն 17.09.2013թ. թիվ ՀՍ/997-13 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծվել է Ընկերության կողմից ծառայության մատուցումը Պայմանագրի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմքով, մասնավորապես, Պատվիրատուի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում

վերահսկվող շինարարական աշխատանքներում հայտնաբերվել են թերություններ, որոնք Ընկերությունն իր կողմից իրականացվող հսկողության ընթացքում չի հայտնաբերել, չի ծանուցել Պատվիրատուին և համապատասխան գրառում չի իրականացրել շինարարության վարման մատյանում:

12. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն 13.02.2015թ. թիվ ՀՍ/1-127-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պայմանագրի լուծման արդյունքում «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկված Պայմանագրի 4.1 կետով նախատեսված 1205 (հազար երկու հարյուր հինգ) ՀՀ դրամի չափով տուգանքն Ընկերության կողմից վերականգնվել է՝ կից ներկայացնելով նշված գումարի վճարումը հավաստող 24.09.2013թ. N 039082 վճարման հանձնարարագրի պատճենը:

13. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ պայմանագրային պարտավորությունները խախտելու հիմքով ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից 2012թ. դեկտեմբերի 27-ին միակողմանի լուծվել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 20.01.2012թ. կնքված «ՔՆՔ ԾԻԳ-ԾՁԲ-12/37» ծածկագրով պայմանագիրը՝ Պայմանագրի 2.1.3 կետի հիման վրա:

14. ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական կառավարման մարմիններին, Երևանի քաղաքապետարանին ուղղված 16.07.2013թ. թիվ 1/13.1/10103-13 շրջաբերականով ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտումներ թույլ տված մասնակիցների ցանկը (այդ թվում նշելով նաև «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին) և խնդրել խախտման ժամկետից հետո մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացրած մասնակիցների մասին տեղեկատվությունը տրամադրել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

15. ՀՀ ֆինանսների նախարարի 16.07.2013թ. թիվ 1/13.1/10103-13 գրությանը համապատասխան՝ Երևանի քաղաքապետարանը 22.07.2013թ. N 02/61-42397-Հ գրությամբ հայտնել է, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն մասնակցելու համար հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից 20.12.2012թ., 08.01.2013թ. և 25.04.2013թ. կազմակերպված համապատասխանաբար «ԵՔ-ՊԸԱԾՁԲ-13/4», «ԵՔ-

ՊԸԱԾՁԲ-13/7» և «ԵՔ-ՊԸԱԾՁԲ-13/28» ծածկագրերով պարզեցված ընթացակարգերին:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-01/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգում</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2013թ. N 1.1/13.1/937-13 գրությունը, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի 06.11.2012թ. թիվ ՀՍ/365, 11.12.2012թ. թիվ ՀՍ/492, 28.12.2012թ. թիվ ՀՍ/1-585 և ՀՍ/1-586 գրությունները, 17.09.2013թ. թիվ ՀՍ/997-13, 13.02.2015թ. թիվ ՀՍ/1-127-15 և 03.03.2015թ. թիվ ՀՍ/1-197-15 գրությունները և կից փաստաթղթերը, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի 26.08.2013թ. N-ՍՄ-13/19 գրությամբ ներկայացրած կարծիքը, ՀՀ «Քաղաքաշինության ԾԻԳ» ՊՀ-ի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 20.01.2012թ. կնքված «ՔՆՔ ԾԻԳ-ԾՁԲ-12/37» ծածկագրով պայմանագիրը, Երևանի քաղաքապետարանի 22.07.2013թ. N 02/61-42397-h գրությունը և կից տեղեկանքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի առանց մատուցված ծառայության դիմաց վճարելու, պահանջել լուծելու նույն պայմանագիրը, եթե Կատարողը պատշաճ որակով չի իրականացնում նույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Պայմանագրի 2.2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված ծառայությունը, իսկ պայմանագրից՝ ծառայության

արդյունքը վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ անհապաղ հայտնել Կատարողին:

Պայմանագրի 2.4.4 կետի համաձայն՝ Կատարողն իրավունք ունի աշխատանքների ընդհանուր մատյանում նշել դիտողությունները և նկատողությունները հայտնաբերված թերությունների և դրանց վերացման մասին:

Այսպիսով, Պատվիրատուի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում վերահսկվող շինարարական աշխատանքներում հայտնաբերվել են թերություններ, որոնք «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն իր կողմից իրականացվող հսկողության ընթացքում չի հայտնաբերել, չի ծանուցել Պատվիրատուին և ներկայացրել է կատարողական ակտ՝ փաստելով, որ դրանք կատարվել են պատշաճ և ենթակա են վճարման: Հետևաբար, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ՀՀ Վայոց Ձորի մարզի գյուղ Քարագլխի ավագ դպրոցի հիմնանորոգման երեք խմբի (համաշինարարական, արտաքին ջրամատակարարման և կոյուղու բարեկարգման) աշխատանքներից յուրաքանչյուրի նկատմամբ հեղինակային հսկողությունը ոչ պատշաճ որակով մատուցելով՝ ***ավելի քան մեկ անգամ խախտել է*** Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված իր պայմանագրային պարտավորությունները, ինչն էլ հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նկատի ունենալով, որ Ընկերությունը 12.09.2012թ. խախտում թույլ տալուց հետո հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից 20.12.2012թ., 08.01.2013թ. և 25.04.2013թ. կազմակերպված համապատասխանաբար «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-13/4», «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-13/7» և «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-13/28» ծածկագրերով գնման ընթացակարգերին մասնակցելու համար, և հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի հետ 20.01.2012թ. կնքված ՀՀ Վայոց Ձորի մարզի գյուղ Քարագլխի ավագ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության մատուցման «ՔՆՔ ԾԻԳ-ԾՁԲ-12/37» ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը և դրա հետևանքով հաշվարկված տուգանքը մինչև

բողոքարկման խորհրդին սույն եզրակացության տրամադրվելն Ընկերության կողմից վերականգնվել է, գտնում ենք, որ առկա են հիմքեր «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2013թ. N 1.1/13.1/937-13 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը բավարարել՝ Ընկերությանը (ՀՎՀՀ 03308717) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

««Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-01/13 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան